

**ՖՐԱՆԿՈՑՈՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՀԱՅ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

04.09.2019 16:47



Հայաստանի փաստաբանների պալատում սեպտեմբերի 3-ին և 4-ին տեղի է ունեցել երկօրյա քննարկում «Երիտասարդ ֆրանկոֆոն փաստաբանի կարգավիճակի վերաբերյալ առաջարկություններ և եզրահանգումներ» թեմայով: Քննարկմանը մասնակցելու համար Հայաստան են ժամանել ֆրանկոֆոն երկրներից ավելի քան մեկ տասնյակ փաստաբաններ Ֆրանսիայից, Բուլղարիայից, Ռումինիայից, Մակեդոնիայից, Կոսովոյից:

Միջոցառումը կազմակերպվել է Ֆրանկոֆոնիայի Միջազգային Կազմակերպության (Organisation Internationale de la Francophonie) աջակցությամբ և ֆինանսավորմամբ և հանդիսանում է 2018 թվականի ապրիլին Կամերունի մայրաքաղաք Յաունդեում տեղի ունեցած համանուն խորագրով համաժողովի շարունակությունը:

Հյուրերը շրջայց են կատարել Փաստաբանների պալատի, այդ թվում՝ Հանրային պաշտպանի գրասենյակի և փաստաբանական դպրոցի հարկաբաժիններում, ծանոթացել են տեխնիկական պայմաններին և հնարավորություններին:

Քննարկման սկզբին Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նշել է. **«Անցած տարի մեծ շուքով Հայաստանում նշվեց Ֆրանկոֆոն երկրների գագաթաժողովը: Սա փաստում է, որ մենք անմասն չենք ֆրանկոֆոնների արտահանած մշակույթից: Այդ մշակույթն անդրադառնում է նաև փաստաբանության վրա: Պետք է արձանագրել, որ փաստաբանությունն օր օրի դառնում է ավելի գրավիչ մասնագիտություն, վստահ եմ, որ դուք դրա մասին կփաստեք ձեր երկրների օրինակով: Մեր երկրում տարեց տարի շատանում է հոսքը դեպի փաստաբանություն: Մեզ մոտ փաստաբանական դպրոցում սովորում են արդարադատության ոլորտում կայացած պաշտոնյաներ, դա խոսում է այն մասին, որ մեր համայնքում նրանք վստահություն և կայունություն են տեսնում»:**

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության կենտրոնական եվրոպայի ներկայացուցիչ Ռենի Յոտովան նույնպես շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար և Հայաստանի փաստաբաններին փոխանցել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր

քարտուղարի ողջույնները, նշելով, որ նա հետևողական է ֆրանկոֆոնիայի շրջանակներում տեղի ունեցող յուրաքանչյուր զարգացմանը:

Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների միջազգային միության գլխավոր քարտուղար Բեռնար Վաթին նույնպես շնորհակալություն է հայտնել ՀՀ փաստաբաններին և նշել որ. **«Մեր հանդիպման նպատակն է նաև, որպեսզի կապեր ստեղծվեն արևելյան եվրոպայի երկրներին և հատկապես Հայաստանի միջև, որովհետև Ձեր երկիրը դիտարկվում է որպես եվրոպայի մասնիկ: Մեր նպատակներից է նաև, որ փաստաբանների շփումը միմյանց հետ, ինչպես նաև փորձի ու գիտելիքների հարստացումն է»:** Բեռնար Վաթին հայտնել է, որ 2009 թվականին առիթ ունեցել է Հայաստանի փաստաբանների պալատում հյուրընկալվել, և փաստել է, որ փաստաբանների պալատը լրիվ ժամանակակից ներկայանալի պայմաններ ունի:

Սեմինարի ընթացքում կներկայացվել են որոշակի վերլուծություններ, եզրահանգումներ, առաջարկություններ, որոնք հաստատվել են CIB անդամների կողմից 2018 թվականի դեկտեմբերին Շվեյցարիայի Լոզան քաղաքում տեղի ունեցած տարեկան ժողովի ժամանակ:

Հավաքի նպատակն էր Կենտրոնական և Արևելյան եվրոպայի անդամ պետությունների փաստաբանական միություններին հասանելի դարձնել նշված վերլուծությունները, եզրահանգումները և առաջարկությունները: Քննարկումները տեղի են ունեցել հետևյալ թեմաների շուրջ`

1. **«Երիտասարդ փաստաբանի մուտքը (ինտեգրումը) փաստաբանների միություն և փաստաբանական գրասենյակ».**
2. **«Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության առանձնահատկությունները».**
3. **«Երիտասարդ փաստաբանը` որպես քաղաքացի: Ի՞նչ դերակատարում պետք է փաստաբանն ունենա հասարակության շրջանում»:**
4. **«Երիտասարդ փաստաբանը և նորագույն տեխնոլոգիաները».**













```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```